

## Ա Ձ Գ Ա Ց Ի Ն

Այն նշանակութիւնը, որ ունի Ս. Էջմիածինը որպէս հայրապետական Մայր Աթոռ՝ ազգիս վերաբերութեամբ, և այն դրութիւնը, որի մէջ գտնվում է այդ նուիրական սրբախայրը, քաջ իսկ կարագրուած է Արձագանք շաբաթաթերթի տարւոյս 24 համարում «ՀՐԱԻԷՐ ՀԱՅ ԱԶԳԻՆ» վերնագրով, որ առանց բառ աւելացնելու արտատպումներ, առաջարկելով մեր ընթերցողներին կարգալ և մտածել:

• ՀՐԱԻԷՐ ՀԱՅ ԱԶԳԻՆ •

• Այսօր ամենուրէք ցրուած հայերիս բարոյապէս ի մի կապողը Ս. Էջմիածնի Աթոռն է: Ոչ որ կարող է ուրանալ մեր այդ հոգևոր կենաց կեդրոնատեղւոյ մեծ նշանակութիւնը Հայ ազգի համար: Մեռ հեթանոսական Հայաստանում քրիստոնէական լոյսը ծաւալուեցաւ Միածնի Ս. Իջման տեղից և այսօր, տասն և վեց դար անցած, հայ մարդը դարձեալ Ս. Էջմիածնից է սպասում իւր հոգեկան մխիթարութիւնը, իւր կրօնական ղեկավարութիւնը: Արիւնով գնած մեր սուրբ կրօնը պատմութեան մէջ սերտ կապուած է յիշեալ վանքի անուան հետ: Հեթանոսութեան և մահմետականութեան մէջ անսասան մնացած Լուսաւորչի այդ մեծ հիմնարկութիւնը սրբազան աւանդ է մնացած մեզ մեր հարց կողմից և քանի որ կայ աշխարհիս վերայ Հայ ազգը իւր լոյս հաւատով, նա անխախտ և կանգուն պիտի մնայ մեզ համար: Ներկայ լուսաւոր ժամանակներում հայն անտարբեր չէ կարող լինել գէպի Ս. Էջմիածինը: Նա ամենայն իրաւամբ կը ցանկայ, որ Մայր Աթոռը արդարև իւր արժանաւիպել զիրքը ունենայ: Հայ ազգը կը բաղձայ, որ Աթոռի Հայրապետը, նման սրբոց Գրիգորիսեանց և Ներսիսեանց, մեծագործ լինի — քաջ հովուապետ, պաշտպան եկեղեցւոյ, մեծ ուսուցիչ: Հայն կը սպասէ, որ Ս. Էջմիածնը համագատառիան լինի իւր վսեմ հոգևոր — կեդրոնացուցիչ նշանակութեանը: Այնտեղից կուզենք ականնել բոլոր այն միայնակ կենդանորար աղբիւրը, որ համայն ազգիս բարոյական և հոգևոր կրթութեան գործին պիտի նպաստէ: Մենք կը ցանկանք, որ վանքական միաբանութիւնը վերականգնեցնէ մեր գրականութեան ոս-

կեղէն դարը և ծառայէ գիտութեան և ուսման: Մեզ սիրելի է ունենալ բանիբուն և քարոզիչ վարդապետներ: Մեր իղձն է, որ վերջապէս վերանան մեր միջից անուս, ազէտ քահանայք և փոխարէն դոյա հոյ ազգի հովիւները փայլին իրանց ուսմամբ:

• Այս բոլոր պահանջները Հայ ազգը ամենայն իրաւամբ ուղղում է Ս. Եջմիածնին և այնտեղից է սպասում՝ ազգիս արժանաւոր պաշտօնեայք: Վժբաղգաբար Մայր Աթոռի ներկայ նիւթական գրութիւնը անկարող է բաւականութիւն տալ մեր պահանջներին: Եւ ոչ միայն այսքան, այլ և պիտի աւելայնենք, որ այդ գրութիւնը միանգամայն աննախանձելի է: Յաւելով պիտի խոստովանինք, որ այս ցանկալի վայրը, հայոց այս պանծալի հոգևոր սուներ այսօր զուրկ է արտաքին փայլից և մի խորն, ճնշող տպաւորութիւն է թողնում ջերմեռանգ այցելուի վերայ: Եջմիածնի Ս. Տաճարը, այս մեծահամբաւ պատմական կոթողը այժմ նսեմացած է անգութ ժամանակի ձեռքով: Նորա շինութիւնը անհետաձգելի վերանորոգութեան է կարօտ, իսկ վայելուչ վերանորոգութեան համար մի նշանաւոր գումար է հարկաւոր, որ վաճար իւր միջոցներէյ հայթհայթել չէ կարող: Վանքիյ յետոյ այցելում էք Վեհարանը, այսինքն այն շինութիւնը, ուր բնակւում է ընդհանուր հայոց կաթողիկոսը, ուր այցելում են ազգիս Հովուապետին թագաւորազունք և իշխանք, գիտնականք և համբաւաւոր անձինք, մերայինք և օտարազգիք: Բայց որքան ամօթ: Վեհարանի շինութիւնը ոչ միայն վեհ չէ, այլ և մի այնպիսի անշուք և անզարդ բնակարան է, ուր արժան չէ չորս հինգ միլլիոն ազգի Վիտապետին սոք անգամ՝ զնել, ուր մնաց որ քաւ և ս կարեւոր վերանորոգութեանց պէտք ունի: Հրամայեցէք այնուհետև Վեհարանին կից եզող Եջմիածնի այն հռչակաւոր գրադարանը, որ հեռուից այնքան համբաւ ունէ ստացած Եւրոպայուոյ տէքում: Մի վախիք ուռած և ճարճաքուած պատի տակով բարձրանալու մի նեղ սանդուխի վերայ, այդ պատը թէև, իրաւ է, միօր պիտի փլչի, բայց ահա քանի տարի է որ լոկ խաբուտիկ սպառնալիքով անհանգստութիւն է պատճառում՝ զգոյշ այցելուաց, որոնց գրադարանից ցած գալուց յետոյ, տեսուչը միշտ փառք է տալիս Աստուծոյ թէ այս անգամ էլ անվտանգ պրծանք: Եթէ երեկոյեան մի մեծ անձրև է եղել Վաղարշապատում, շտապեցէք այսօր մտնել գրադարանի նախընթաց դահլիճը, որ յատկացրած է գիտնական պա-

բազմանց համար: Մի ուշք դորձնէք ճարուած պատերի վերայ  
 և մի նայիք առաստաղի գոյնդգոյն անձրևից գոյադած նկարների  
 վերայ: այլ հիացէք այն տեսարաններով, որ բազդի բերմամբ  
 պատրաստուել է այստեղ բնութեան և մարդու ձեռքով: Ահա  
 դահլիճի ճակատը զարգարում է մեծանուն Այլազուխու քանի  
 մի հազարներ արժեցող ծովաօեսիլ մի նկար. որքան կենդանու-  
 թիւն ջուրց, որքան բնական . . . Բայց մի շտապ մօտենաք այդ  
 տաղանդաւոր իրձինի պտուղին. նախ նայեցէք ձեր առաջ և ահա  
 յատակի վերայ երեկոյեան անձրևից գոյացել է մի լիճ, որի երե-  
 սին փթած, մալխագոյն փոքրիկ ալիքները իրանց բնականութեամբ  
 կասես թէ մաքառում են, հստակաւոր նկարչի արհեստականի  
 հետ . . .

• Փութացէք, թողէք առանց հետազօտութեան հայ ազգի այդ  
 հստակաւոր գրադարանը, որի շէնքը իւր առաջին մուտքում այն-  
 քան լուսնագաւոր է: Վար իջէք և Վեհարանի սեփհական պար-  
 տիզի մօտով անցէք դէպի Ս. Էջմիածնի Սինօղը: Մեր բարեկա-  
 մական խորհուրդն է՝ զգուշութեամբ մօտեցէք այդ երբեմն կա-  
 մարակապ և սիւնազարդ շինութեանը: Դա այսօր նմանութիւն է  
 Դառնիի Տրգատայ գահի մնացորդներին և գուցէ կենդանի պատ-  
 կեր է իւր ներքին բովանդակութեան: Այլէք դուրս Վեհարանական  
 բաժնից և հրամայեցէք միաբանութեան ձմեռուայ և ամառուայ  
 հասարակաց ճաշարանները—սեղանատները, ուր հարիւր միա-  
 քանք, ժառանգաւորք և հիւրեր միասին սեղան են նստում թէ  
 հասարակ և թէ տօն օրերում: Աւշադրութիւն զարձրէք այդ  
 համեստ ճաշեր վայելող միաբանութեան վերայ և մտաբերեցէք,  
 թէ որքան հեռի է այդ սահմանափակ և խիստ—կրօնական ազ-  
 քատիկ կեցութիւնը փոքր ի շատէ զարգացած կենցաղավարու-  
 թիւնից, որի ճաշակի հետ ծանօթ չէ տակաւին Ս. Էջմիածնի  
 վանքը: Այցելեցէք այնուհետև արքեպիսկոպոսաց, եպիսկոպոսաց  
 և ճայրապոյն վարդապետաց խօսքերը: Ըստ երևոյթիւն, որքան  
 խեղճութիւն, անյարմարութիւն, անվայելչութիւն: Չը գիտենք,  
 ինչ կայ նոցա խնաւ խրճիթի ծածկուած սնդուկներում, գիտենք  
 միայն որ նոցա բնակարանները թէ ձմեռը և թէ ամառուայ տե-  
 ղի տօթարեր եղանակներում անտանելի են փոքր ի շատէ յար-  
 մարութիւն փնարող անձանց համար, թէև սոքա խստակրօնու-  
 թեան լինէին դատապարտած իրանց անձը:

• Որքան որ նախապաշարուած լինիր գէպի Ս. Էջմիածնի այժմեան միաբանութիւնը, այնու աւենայնիւ ուշագիր եղէք, որ այդ տեղ հայ արքեպիսկոպոսն անգամ տարեկան 300 բուրլից աւելի թոշակ չունէ: Մի մտնէք արհիի խուցը. որոյ անշուք դուրսիւնը շատ հրապուրիչ չէ, բայց ուշագրութիւն դասձրէք, թէ ինչպէս եպիսկոպոսներից սկսած մինչ ժառանգաւոր մանթը ամէնքը տանջվում են ոսկրացաւից, որ յառաջ է եկել եկեղեցւոյ և բնակարանների խոնաւութիւնիցը:

• Հիմայ հրամայեցէք գէպի Ազգարապատ, ուր սովորաբար իջնում են վանքի հիւրերը: Ո՞րքան աղքատիկ, կիսախարխուլ և միանգամայն ազգային «ճանր» անվայել շինութիւն . . . Պէտք երեւկայել թէ որպիսի տխուր տպաւորութեամբ է հեռանում Ազգարապատի մէջ հիւրասիրուած մերայիներ և օտարազգին . . .

• Ներկայումս Ազգարապատ մտնող ճանապարհորդի ուշագրութիւնը գլխաւորապէս գրաւում է Գէորգեան ձեմարանի շինութիւնը. նատերը ի հարկէ յիշում են, թէ ինչպէս մի տասն և հինգ տարի առաջ ընդհանուր հայ ազգը բաղձանք էր յայտնում այգպիսի մի բարձրագոյն հիմնարկութիւն ունենալու: «Մէ ազգ, որ այդպէս էր ցանկայ իւր կէրէն և կըթաթիւր Բարձր դերքի մեջ տեւնել, տնը-շա օթանքակ կէրէն էն իւր վաթագը ի կարար Թէւը:» Այսպէս մտածեց հոգելոյս Գէորգ IV ը և յոյսը ազգի վրայ դնելով, ձեռք տուեց գործին: Արդարև դարմանալի էր, որ այգպիսի մի վսեմ ձգտում ծնեցաւ 60 տարեկան ծերունւոյ մէջ, որ անձամբ ծանօթ չէ եղած ոչ մի համանման հիմնարկութեանց, բայց աւելի ևս զարմանալի եղաւ այն եռանդը, որ ցոյց տուեց մարմնական տկարութեան մէջ տոչորուող Քահանայապետը: Աանքական գանձարանը անձուկ վիճակի մէջ գտնելով, հոգելոյս վեհը դիմեց ազգի օգնութեանը: Ռուսիոյ հայք վեց-եօթը տարուայ մէջ քանի մի հարիւր հազար բուրլի հանգանակեցին, որից մօտ 250 հազարը ծախս եղաւ միմիայն ձեմարանի շինութեան վերայ: Բայց բաւական չէր միայն շինութիւն կառուցանելը. հարկ էր այդ հիմնարկութեանը իւր անուանը վայել ներքին վայլ տալ — որ նշանաւոր ծախսով միայն կարող էր կայանալ . . . : Հարկ էր վերջապէս նիւթապէս ապահովացնել ձեմարանի յարատեւութիւնը, առանց որոյ դա անկարող էր ցանկալի յառաջադիմութիւն ցոյց տալ: Զը նայելով հոգելոյս Գէորգի բոլոր ջանքին, չը յաջողեցաւ նորան իւր այս

վերջին ցանկութիւնը կատարուած տնտեսիչ, Նախախնամութիւնը վերջ գրեց նորա երկրաւոր կենաց, թողնելով և Գէորգեան ձեմարանը անապահոյ վիճակի մէջ, և ահա տարի ու կէս շանցած, տարիներով և դարերով կրողած հիմնարկութիւնը նութականի պակասութեան պատճառաւ գոցե ստիպուած լինի փակել իւր դռները ճիշդ այն միջոցին, երբ սկսել էր պատու տալ...

« Այժմ՝ Հայ ազգը չը տեսնուած եռանդով և ջերմեռանդութեամբ կատարեց իւր կաթողիկոսական ընտրութիւնը :

« Յանկալի և բազմալի Հայրապետը, չորս հինգ միլիոնաւոր Հայ ազգի Հոգեւոր Տէրը, պիտի գայ իւր Աթոռում բազմելու :

« Նա պիտի ազօթէ իւր հօտի վերկութեան համար այն պատմական Տաճարում, որի այժմեան անշուք դրութիւնը ամենեւին համարատասխան չէ թէ իւր անդեալ փառաց և թէ ներկայ սերունդիս ինքնասիրութեանը... Ա՛րքան ամօթ :

« Նա պիտի ընակի և նշանաւոր այցելուաց պատուատիրէ այն խարխուլ և տգեղ շինութեան մէջ, որ վեհարան է կոչոււմ : Ա՛րքան ամօթ :

« Նա պիտի լսնէ դասելու և յարձարելու, հրամայելու և պատուիրելու այն աւերակ շէնքի մէջ, ուր զեռնուած է Սինօթի ատեանը : Ա՛րքան ամօթ :

« Նա պիտի մտնէ գրագարանը անձամբ ծանօթանալու նախնեաց պատուական երկասիրութեանց հետ, բայց բոպէ բոպէ պիտի սպասէ պատի փոյշելուն : Ա՛րքան աննախանձելի դրութիւն :

« Նա պիտի չ'կարողանայ իւր շուրջը ժողովել և համախմբել Յ. Եջմիածնի «էջ գիտնական և զարգացած կրօնաւոր և աշխարհական անձինք—նախ և առաջ չը կարողանալով տալ դոցա մի վայելուչ բնակարան : Ա՛րքան զաւալի բան :

« Վերջապէս, նոյն խի Աթոռը մտած օրը Նա պիտի լսէ քանի մի հարիւր մանկանց լայր, սրունց համար ստիպուած պիտի լինի ձեմարանը գոցել իւր դռները միջոցները սպառելու պատճառաւ : Ա՛րքան անտանելի դրութիւն :

« Այսօրիսի մ' աննախանձելի վիճակ է սպառնում նորընտիր Յայրագոյն Պատրիարքին և Կաթողիկոսին ամենայն Հայոց իւր Եջմիածին մտած օրը :

• Եջմիածնի Տաճարը վերանորոգել պէտք է—վանքի գանձարանում գրամ չ'կայ: Վեհարանը և Ս. Սինօզը շինել պէտք է—գարձեալ գրամ չ'կայ: Գրատան ճարտաճ պատերը վերցնել պէտք է—նոյնպէս գրամ չ'կայ: Միաբանութեանը պատշաճաւոր բնակարաններ տալ հարկ է—վանքը միջոց չունէ: Այցելուաց և հիւրերի ընդունելու համար Ղազարապատը պէտք է վերանորոգել—յայտնի չէ թէ որ աղբիւրից:

• Գէորգեան ձեմարանի գոյութիւնը, յարատեւութիւնը և պայծառութիւնը հինգ միլլիօն հայ ազգի կարիքն է և պատուոյ խնդիր—իսկ գորան ներկայումս նիւթական տագնապ է սպառնում: Խնչ կարող է անել այդպիսի դրութեան մէջ ազգիս բաղձալի Վեհափառ Կաթողիկոսը . . . :

• Յոյս դնել Ս. Եջմիածնի գանձարանի վերայ անկարող է նա ով որ ի մօտոյ ծանօթ է Աթոռի ստիտական եկամուտներին: Ի հարկէ, կարելի էր այդ եկամուտներից շատերը բարգաւաճել, կարելի էր բարեկարգութեամբ և խնայողութեամբ առատացնել վաճառական անձուկ գանձարանը—բայց այդ բոլորը երբէք չէ կարող հասնել այն աստիճանին, որ Աթոռը առանց արտաքին օգնութեան կարողանար բաւականութիւն տալ գէթ վերոյիշեալ անհրաժեշտ պահանջներին, ուր մնաց որ դոցանով չէ կարող բաւականանալ նորընտիր Հայրապետը: \*

#### Կ. Պ Օ Լ Ս Ո Յ Ձ Ա Յ Ն

Ազգ. ժողովն երեկ (Մայիսի 9) գումարեցաւ ի Ղալաթիա, ընդ նախագահութեամբ Իզմիրլեան Գեր. Տ. Մատթէոս Սրբազանի, ատենապետութեամբ Տիգրան Էֆ. Եռեսուֆեանի, և ի ներկայութեան 31 երեսփոխանաց, որոց թիւն ապա 52 ի յանդեցաւ:

Ատենը ժամ 7 1/2 ին բացուելով, ատենապետ Տիգրան Էֆ. Եռեսուֆեան համառօտ բանախօսութեամբ մը շնորհակալութիւն յայտնեց այն բարձր վստահութեան համար, որով ժողովը պատուած էր իւր նորընտիր ղեւանն, որոյ իբրև ատենապետը կը խոստանար ժողովոյն աշխատութիւնները զիւրացնել և պսակել՝ հետեւելով միայն Ազգ. Սահմանագրութեան ներքին կանոնադրոյն և ազգային ընդհանրական շահուց: Այս հակիրճ բանախօսութենէն յետոյ, ատենապետ Էֆ. խոս-